ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հունիսի 2025թ. թիվ 288-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. մարտի 3-ի «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահութաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N 1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 202-Ն որոշմամբ հաստատված կարգի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ, 66-րդ և 67-րդ հոդվածների պահանջները, ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի համակարգի առևտրային կազմակերպությունների 2024 թվականի գործունեության արդյունքներով 2025 թվականին ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

24/06/2025

X

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

2025թ. հունիսի 24
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2025թ. հունիսի 24-ի
թիվ 288-Ա որոշման

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ

1. «Ախթալայի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի 2024թ. տնտեսական գործունեության արդյունքում առաջացած 254600 դրամ զուտ շահույթի 50% կազմող 127300 դրամը վճարել ՀՀ պետական բյուջե՝ որպես շահութաբաժին, իսկ մնացած մասն ուղղել սպառողական ֆոնդին:
2. «Գուգարք» կենտրոնական պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի 2024թ. տնտեսական գործունեության արդյունքում առաջացած 907000 դրամ զուտ շահույթի 50% կազմող 453500 դրամը վճարել ՀՀ պետական բյուջե՝ որպես շահութաբաժին, իսկ մնացած մասն ուղղել սպառողական ֆոնդին:
3. «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի 2024թ. տնտեսական գործունեության արդյունքում առաջացած 456000 դրամ զուտ շահույթի 50% կազմող 228000 դրամը վճարել ՀՀ պետական բյուջե՝ որպես շահութաբաժին, իսկ մնացած մասն ուղղել սպառողական ֆոնդին:
4. «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի 2024թ. տնտեսական գործունեության արդյունքում առաջացած 355000 դրամ զուտ շահույթի 50% կազմող 177500 դրամը վճարել ՀՀ պետական բյուջե՝ որպես շահութաբաժին, իսկ մնացած մասն ուղղել սպառողական ֆոնդին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

24/06/2025

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ. ԱՇՐԱՖՅԱՆ